ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գոռ Քոչարյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ք. Մանիլա (Ֆիլիպինների Հանրապետություն) 2023 թվականի հոկտեմբերի 23-27-ը

3. Հրավիրող կողմը

Ասիական Զարգացման Բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Ասիական Զարգացման Բանկի կողմից կազմակերպված՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների միջազգային խորհրդի կլոր սեղան և հանրային հատվածի հաշվապահական հաշվառում» աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

- Հանրային հատվածի կազմակերպություններում կայուն զարգացման հաշվետվողականության առաջխաղացման արդի զարգացումները և շահառուները.
- Հայաստանի Հանրապետությունում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների փորձը, առկա մարտահրավերների և հետագա քայլերի քննարկում.
- Կորեայի Հանրապետությունում, Ուզբեկստանի Հանրապետությունում, Ֆիլիպինների Հանրապետությունում Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների վերաբերյալ քննարկում.

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են ծրագրի շահառու երկրներում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների ընթացքը, հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում կատարված վերջին փոփոխությունները և զարգացումները, արդի հիմնախնդիրները: Ներկայացվել են ՀՀ-ում իրականացված բարեփոխումները, հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման ընթացքում առաջացած խոչընդոտները, դրանց վերացմանն ուղղված քայլերը և առաջիկա անելիքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Առկա չեն

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նոյեմբերի 1, 2023թ.